ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/2 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-6/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 10-ը հունիսի 2016թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյան,
ՀՀ ՊՆ կադրերի և ռազմական կրթության վարչության ՀՀ և ԱԵ ՈՒՀ-երում կադրերի պատրաստման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Վ. Իրիցյան,
ՀՀ ՊՆ ներքին աուդիտի վարչության կատարողականի աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ս. Աթանեսյան,
Հ ՊՆ աշխատակազմի վերահսկիչ վարչության ԸՎ բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Մուրադյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/2 – ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-6/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ /գնային առաջարկ/ ներկայացրած և չներկայացրած մասնակիցների մասին.
2. «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-6/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հարցում պարունակող հայտերի կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հարցման պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին
4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-6/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին:
5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Ավիատոմսերի վաճառքի ծառայությունների»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-6/9» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Ավիատրանս» ՓԲԸ
2	«Արմենիա Թրավել+Մ»
3	«Ավիատուր Գրուպ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:.

2 .«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/2 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-6/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Մաղաքյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/2-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-6/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «Ավիատրանս» ՓԲԸ-ի, որի հայտում առկա էր անհամապատասխանություն մասնավորապես՝ հավելված 4-ի մեկ միավորի գինը սյունակում լրացված էր 0 տոկոս, իսկ ԱԱՀ դաշտում գումար էր նշված, որը չէր համապատասխանում ԱԱՀ-ի մասին օրենքի պահանջներին, հաշվի առնելով նշված հանգամանքը հանձնաժողովը որոշեց մերժել մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Մաղաքյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել 3 մասնակից.

Հ/հ	Գնման առարկայի անվանումը Ավիատոմսերի վաճառքի ծառայություն հետևյալ ուղղություններով	Քանակը	Չ/մ	«Ավիատրանս» ՓԲԸ-ի առաջարկ /չափաբաժնի գին/	«Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ի առաջարկ /չափաբաժնի գին/	«Ավիատուր Գրուպ» ՍՊԸ-ի առաջարկ /չափաբաժնի գին/	1-ին /հաղթող/ զբաղեցնող մասնակից
1	Երևան-Մոսկվա-Երևան (մեծահասակ)	1	հատ	---	124,000	128,000	«Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ
2	Աթենք-Երևան-Աթենք (մեծահասակ)	1	հատ	198,529	200,000	203,000	ոչ շահավետ առաջարկ
3	Սալոնիկ-Աթենք-Երևան (մեծահասակ)	1	հատ	95,910	98,000	99,000	ոչ շահավետ առաջարկ
4	Սալոնիկ-Աթենք-Երևան (մեծահասակ)	1	հատ	95,910	98,000	99,000	ոչ շահավետ առաջարկ

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/: Ըստ ներկայացված տվյալների՝ մասնակիցները սույն ծառայությունների մասով ԱԱՀ չեն վճարում:

3.3 Քանի որ ավիատոմսերի գնումն իրականացնելու համար կազմակերպված ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ՇՀԾՁԲ-6/9» ծածկագրով ընթացակարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով «Ավիատուր Գրուպ» և «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ների առաջարկված գները գերազանցում էր պատվիրատուի տվյալ գնումների համար նախատեսած ֆինանսական միջոցների չափը, ինչպես նաև տարբեր էլեկտրոնային կայքերում տվյալ ուղղություններով առաջարկվող գները, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի պահանջները, գների նվազեցման նպատակով 13.06.2016թ. ժամը 14:35-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպվեցին բանակցություններ, սակայն բանակցությանը որևէ մասնակից չներկայացավ:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/2-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-6/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

4.1 **13.06.16թ.** «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/2-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-6/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ -ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ(եթե առկա է) զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական

բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-6/9» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը տրամադրելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ	Վ. Գասպարյան
գնահատող՝	Գ. Ուստյան
գնահատող՝	Վ. Իրիցյան
գնահատող՝	Ա. Մուրադյան
գնահատող՝	Ս. Աթանեսյան
գնահատող՝	Ա. Հակոբյան
Գնումները համակարգող՝	Ա. Մաղաքյան